ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մարտի 2020 թվականի N 237

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/5 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Արմեն Հովհաննիսյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 05032020-07-0048 վկայական) ***ք. Չարենցավան Երևանյան փողոց թիվ 2/5*** հասցեում գտնվող 25.04քմ արտաքին մակերեսով ավտոտնակը (ներքին մակերես՝ 23.33քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 34.4 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Արմեն Հովհաննիսյանին***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 2100 (երկու հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.21).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ:

3. ***Արմեն Հովհաննիսյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 52590 (հիսուներկու հազար հինգ հարյուր իննսուն) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 101140 (հարյուր մեկ հազար հարյուր քառասուն) դրամ՝ հողամասի գինը:

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Արմեն Հովհաննիսյանի*** կողմից:

5. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կումունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Արմեն Հովհաննիսյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

Digitally signed by SHAHGALDYAN HAKOB 1101740744
Date: 2020.03.20 15:50:21 AMT

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մարտի 2020 թվականի N 236

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԲՋՆԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 3-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Չարենցավան համայնք գյուղ Բջնի 1-ին փողոց 2-րդ նրբանցք 3-րդ փակուղի թիվ 2 հասցեի 0.500 հա մակերեսով այգեգործական հողամասի վրա ինքնակամ կառուցված 122.33 քմ ընդհանուր մակերեսով այգետնակը կառուցված է 1986 թվականին, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը: Շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:Նկատի ունենալով, որ որակավորված մասնագետի կողմից ներկայացված չափագրման արդյունքում պարզված Չարենցավան համայնք գյուղ Բջնի 1-ին փողոց 2-րդ նրբանցք 3-րդ փակուղի թիվ 2 հասցեի սեփականատեր Վլադիմիր Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող այգեգործական հողամասում 1986 թվականին ինքնակամ կառուցվել է այգետնակ 122.33 քմ ընդհանուր մակերեսով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնք գյուղ Բջնի 1-ին փողոց 2-րդ նրբանցք 3-րդ փակուղի թիվ 2 հասցեի 0.500հա մակերեսով այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված այգետնակը՝ 122.33 քմ ընդհանուր մակերեսով համարել օրինական:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն

«20» մարտի 2020 թվականի N 235

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 20-ի «Չարենցավանհամայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 7 որոշմամբ սահմանված կարգը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները՝ ֆինանսական օգնություն ստանալու մասին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

1.	Բաբայան	Էլֆրիդա	AM0391156	25 000	դրամ
2.	Բարսեղյան	Շողակաթ	AM0452598	25 000	դրամ
3.	Ալլախվերդյան	Սվետլանա	AM0879404	25 000	դրամ
4.	Գրիգորյան	Կարինե	AM0903001	25 000	դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» մարտի 2020 թվականի N 234

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վահե Գալստյան Վազգենի» անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնքի 1-ին թաղամաս 10-րդ շենք թիվ 3 բացվածքում գտնվող հանրային սննդի օբյեկտում, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N893/12 առ 2020 թվականի մարտի 17-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N00140 անդորրագրի դիմումատուն 2020 թվականի երկրորդ եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 67-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***«Վահե Գալստյան Վազգենի»*** անհատ ձեռնարկատիրոջը 2020 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնքի 1-ին թաղամաս 10-րդ շենք թիվ 3 բացվածքում գտնվող հանրային սննդի օբյեկտում, իրականացնելու հանրային սննդի կազմակերպում և իրացում (Վկայական N014147):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ ***Վ. Բարսամյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«18» մարտի 2020 թվականի N 233

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՇՏԱԲ ԵՎ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԹԻՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետերի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 5-րդ և 16-րդ հոդվածների, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2020 թվականի մարտի 17-ի N 01 /08.2/02014-2020 գրությունը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության մակարդակով կորոնավիրուսային վարակի բերովի դեպքով/դեպքերով (COVID-19) պայմանավորված ձեռնարկվող միջոցառումների համակարգման համար Չարենցավան համայնքում ստեղծել շտաբ և արագ արձագանքման թիմ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Հավելված N 1
Չարենցավան համայնքի ղեկավարի
2020 թվականի մարտի 18-ի N 233 որոշման

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ԲԵՐՈՎԻ ԴԵՊՔՈՎ/ԴԵՊՔԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԱԾ ՇՏԱԲԻ ԿԱԶՄԸ

Շտաբի պետ՝
Հակոբ Շահգալդյան համայնքի ղեկավար,
Շտաբի պետի տեղակալ՝
Վարդգես Չիլինգարյան համայնքի ղեկավարի տեղակալ

Շտաբի անդամներ՝

ոստիկանության ներկայացուցիչ՝

Արթուր Հայրապետյան-ոստիկանության Չարենցավանի բաժնի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ

սոցիալական աջակցության գծով պատասխանատու՝

Նորիկ Կարապետյան- Չարենցավանի ՍԾՏԳ-ի պետ

առողջապահական գծով պատասխանատու՝

Վարդուհի Մարգարյան- «Չարենցավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ամբուլատոր գծով փոխտնօրեն,

վարչա-իրավական գծով պատասխանատու

Սուրեն Մուրադյան- Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

ֆինանսական ծառայության գծով պատասխանատու՝

Գայանե Աֆյան- Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ ,

կամավորների հետ տարվող աշխատանքների համակարգող՝

Գառնիկ Բեգլարյան- համայնքապետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի գլխավոր մասնագետ

Լրատվության պատասխանատու

Սաթենիկ Բալաբեկյան- համայնքապետարանի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Հավելված N 2
Չարենցավան համայնքի ղեկավարի
2020 թվականի մարտի 18-ի N 233 որոշման

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ ԲԵՐՈՎԻ ԴԵՊՔՈՎ/ԴԵՊՔԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԹԻՄԻ ԿԱԶՄԸ

Թիմի պատասխանատու՝

Վարուժան Բարսամյան- Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ

Թիմի անդամներ՝

Արտավազդ Ալեքսանյան- համայնքի ղեկավարի օգնական

Բենիկ Բալբաբյան- Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ

Աշոտ Ծերունյան-Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ

Արմինե Զաքարյան- Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ

Արթուր Աբգարյան- Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-Ի տնօրեն

Արմեն Բաղդասարյան- Կարենիս բնակավայրի վարչական ղեկավար,

Դավիթ Իվանյան- Ֆանտան բնակավայրի վարչական ղեկավար,

Արտակ Սարիբեկյան- Ալափարս բնակավայրի վարչական ղեկավար,

Լիպարիտ Մարգարյան- Արզական բնակավայրի վարչական ղեկավար,

Արմեն Մաթևոսյան- Բջնի բնակավայրի վարչական ղեկավար

Սարիբեկ Ստեփանյան- «ՆԱՐԵ-99» համատիրության կառավարիչ

Վալերի Բաբայան- «ԿՌՈՒՆԿ» համատիրության կառավարիչ

Վազգեն Բաբայան- «ԱՆԴՐԱՆԻԿ» համատիրության կառավարիչ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«16» մարտ 2020 թվականի N 232

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տիգրան Ղազարյան Մամիկոնի» անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ.Բջնի, Բջնիի Գետափ հանգստյան գոտի հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում, ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N 828/12 առ 2020 թվականի մարտի 12-ի):

Հաշվի առնելով, որ ըստ անդորրագրի դիմումատուն 2020 թվականի առաջին եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 67-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***«Տիգրան Ղազարյան Մամիկոնի»*** անհատ ձեռնարկատիրոջը թույլատրել 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ.Բջնի, Բջնիի Գետափ հանգստյան գոտի հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում (Վկայական N014146):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ ***Վ. Բարսամյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» մարտ 2020 թվականի N 231

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տիգրան Ղազարյան Մամիկոնի» անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ.Բջնի, Բջնիի Գետափ հանգստյան գոտի հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N827/12 առ 2020 թվականի մարտի 12-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 39 անդորրագրի դիմումատուն 2019 թվականի առաջին եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 67-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***«Տիգրան Ղազարյան Մամիկոնի»*** անհատ ձեռնարկատիրոջը 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ.Բջնի, Բջնիի Գետափ հանգստյան գոտի հանրային սննդի օբյեկտում, իրականացնելու հանրային սննդի կազմակերպում և իրացում (Վկայական N014145):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ ***Վ. Բարսամյանի*** վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 2501,
Կ.Դեմիրճյանի անվ. հրապարակ 1,
Հեռ.՝ (226) 43434, Էլ. փոստ՝ charentsavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» մարտի 2020 թվականի N 230

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ,ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ,ՍԵԼԱՎՆԵՐԻ,ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ,ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՆՎԱՌԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2020 թվականի փետրվարի 26-ի N 64-Ա որոշման 2-րդ կետի, Չարենցավան համայնքում 2020 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով, ***որոշում եմ.***

Հաստատել՝

1. Չարենցավան համայնքի տարածքում 2020 թվականի հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը /համաձայն հավելված 1-ի/:
2. Տեղեկությունները համայնքի հեղեղային կառույցների վերաբերյալ /համաձայն հավելված 2-ի/:
3. Առաջարկությունները համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ /համաձայն 3-9 հավելվածների/:
4. Մինչև մարտի 16-ը Կոտայքի մարզային փրկարարական ծառայություն ներկայացնել սույն որոշման առաջին կետով հաստատված փաստաթղթերը:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ ***Վարդգես Չիլինգարյանի*** վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Հավելված 1
Համայնքի ղեկավարի
2020թ մարտի 13-ի N 230 որոշման

ՊԼԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ,ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հավելված 2
Չարենցավան Համայնքի ղեկավարի
2020թ մարտի 13-ի N 230 որոշման

Տ Ե Ղ Ե Կ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Չարենցավան համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման

Հ/հ	Կառույցիտեղադրությունը (բնակավայր, գետավազան, վտակ)	Կառույցիտիպը (հեղեղատար, հեղեղակարգավորիչ, բառաժ)	Կառույցի				Կառույցիտեղանքիայեսմիկության աստիճանը (բալ)	Մոտակաբնակավայրերի և կառուցվածքներիանվանումը, որոնքկարողենտուժելԿառույցիանբավարարաշխատանքիհետևանքով	Կառույցիտեխնիկականվիճակը (բավարար, անբավարար)
			Երկարությունը (մ)	Լայնությունը (մ)	Խորությունը (մ)	Կողերիթեքությունը (°)			
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	Արզական	հեղեղատար	800	7-8	1-2	45		Արզական	բավարար,
2.	Բջնի գետավազան	հեղեղատար	1000	4	1,5	45		Բջնի	բավարար
3.	Կարենիսի	հեղեղատար	700	6	1.4	60		Կարենիս	բավարար
	Ֆանտանի	հեղեղատար	600	5	1.2	90		Ֆանտան	բավարար
4	Չարենցավան Չարենցի փողոց	հեղեղատար	2000	5	0.5	45		Չարենցավան	բավարար
5	Ալափարս	հեղեղատար	900	1.6	1.5	90		Ալափարս	բավարար

Հավելված 3
Չարենցավան Համայնքի ղեկավարի
2020թ մարտի 13-ի N 230 որոշման

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի սպառնացող պոտենցիալ վտանգավոր Տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման Ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ

1. Վտանգի (աղետի) անվանումը(ները) - Սելավ - Հեղեղում - Սողանք - Քարաթափում - և այլն	Սելավ Հեղեղում
2. Վտանգավորտեղամասիգտնվելուվայրը(երը)	Գ Արզական
3. Առաջացմանհնարավորպատճառները	տևականհորդանձրև
4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	Արզականի վերին թաղամաս, 70տուն, 450բնակիչ
5. Կամխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականցնելու համար	
6. Համայնքների բյուջեներումկամ այլ ծրագրերով 2020թ-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումներ իտեսակների	120 000 դրամ

Հավելված 4
Չարենցավան Համայնքի ղեկավարի
2020թ մարտի 13-ի N 230 որոշման

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Բջնի բնակավայրին սպառնացող պոտենցիալ վտանգավոր Տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ

1. Վտանգի / աղետի/ անվանումը/ ները/ • Սելավ • Հեղեղում • Սողանք • Քարաթափում • և այլն	• Սելավ • Հեղեղում
2. Վտանգավորտեղամասիգտնվելուվայրը /երը/	• Գյուղամերձ տարածքում
3. Առաջացման հնարավոր տատճառները	• Հորդառատ անձրևներ, ձնհալի հետ միաժամանակ • Ջերմաստիճանի կտրուկ բարձրացում
4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	• Ժամանակի ընթացքում սելավների բերած տիղմի նստվածքի առակայություն • Բնակավայր 10տուն , 63 մարդ
5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար	• Սելավատարի հունի մաքրում
6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2020թ.-ին Պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ իջոցառումների տեսակների	• 2020թվականի համայնքի բյուջեում պլանավորված է

Հավելված 5
Չարենցավան Համայնքի ղեկավարի
2020թ մարտի 13-ի N 230 որոշման

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոտայքի մարզի Կարենիս բնակավայրին սպառնացող պոտենցիալ վտանգավորտեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ

1	Վտանգի / աղետի/ անվանումը/ ները/ • Սելավ • Հեղեղում • Սողանք • Քարաթափում • և այլն	• Սելավ • Հեղեղում
2	Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը /երը/	• Գյուղամերձ տարածքում
3	Առաջացման հնարավոր պատճառները	• Հորդառատ անձրևներ, ձնհալի հետ միաժամանակ • Ջերմաստիճանի կտրուկ բարձրացում
4	Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	• Ժամանակի ընթացքում սելավների բերած տիղմին ստվածքի առկայություն • Բնակավայր 20 տուն , 60 մարդ
5	Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար	• Սելավատարի հունի մաքրում
6	Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2020թ.-ին Պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների	• 2020 թվականի համայնքի բյուջեում պլանավորված է

Հավելված 6
Չարենցավան Համայնքի ղեկավարի
2020թ մարտի 13-ի N 230 որոշման

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ֆանտան բնակավայրին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ

1. Վտանգի /աղետի/ անվանումը /ները/ - սելավ - հեղեղում - սողանք - քարաթափում - և այլն	սելավ
2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը /երը/	1-ին փողոց, գերեզմանատան հարևանությամբ
3. Առաջացման հնարավոր պատճառները	ձնհալ
4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	բնակելի տներ, 15 շենք,67 բնակիչ
5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար	մաքուր պահել սելավատարերը
6. Համայնքների բյուջեում կամ այլ ծրագրերով 2020թ-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների	70000 դրամ

Հավելված 7
Չարենցավան Համայնքի ղեկավարի
2020թ մարտի 13-ի N 230 որոշման

Առաջարկություն
Ալափարս բնակավայրին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչությանան վտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ

1. Վտանգի (աղետի) անվանումը(ները) -սելավ -հեղեղում -սողանք -քարաթափում -ևայլն	Սելավ,հեղեղում
2.Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը(երը)	5-րդ փողոց
3.Առաջացման հնարավոր պատճառները	Ձնհալ, հորդառատ անձրևներ
4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	Վտանգավոր , տեղամասերը մաքրված չեն 30 տուն, 150 բնակիչ
5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար	Սելավատարների մաքրում, նորոգում
6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 202[illegible]կանին պլանավորված, հնարավոր արև[illegible]վարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստմիջոցառումների տեսակների	Համայնքի բյուջեում նախատեսված սելավատարների մաքրում